թագաւորութիւն և մեծ իշխանութիւն պատճառս դի-
ցես, տե՛ս և զզարմացումն իմ որ վասն Հրէից աստ
ի քաղաքս բնակելոց ի կարգաւորութիւն(-):

ա. Կիրակի օր ժողովեն ամենայն ժողովրդանոցի
ի թաղսն ի գլուխս մեծ ճանապարհացն Բ Բ այր վասն
աղքատաց, որբոց և այրեաց, և տան նոցա զօրըստ-
օրէն ըստ պատշաճին, և զամենայն պիտոյս նոցա
անտի տեսանեն և զայլս կարգեն և մարդացուցանեն:

Բ. Բշի աւուր վասն հիւանդաց որ յազգին իցեն՝
կարգեալ նոցա սպասաւորս և բժիշկս և խանութ մի
ի պիտոյս նոցա լի ամենայն բարեօք: Եւ սոցունց
ծախ սպասաւորացն եւ բժշկացն եւ խանութին վա-
ճառ՝ ամենայն ինչ ի Բշի աւուր ժողովէն հանեն որ
վասն հիւանդաց:

գ. Գշի օր վասն մանկանց որք յուսումն են եւ
յաշակերտութիւն և անտէրունչք[1]) են, զնոսա տան ի
վարդապետս եւ ի դպրոց: Նաեւ զկատարեալսն եւս
տան ի փիլիսոփայականն հանճար եւ զամենայն կա-
մեցողս: Աստի հանեն զռոճիկս ամենայն ծախից եւ
կերակրոց դպրատանն եւ զտանց վարդապետացն նո-
ցա եւ զտանց կարդացողաց:

դ. Դշի աւուր յաղագս օտարաց, որ ունին պան-
դխտանոցս, տունս եւ յարկս եւ ապրանս նոցա՝ ըստ
չափու ամենեցուն: Եթէ ապրեսցին՝ վայելեսցեն եւ
ընտանեսցին եւ յառաջ եկեալ խառնեսցին ի նոսա,
ուսանելով զքաղաքավարութիւն՝ թէ ո՛րպէս իցէ, ե-
թէ երթիցեն ի բնիկ աշխարհն իւրեանց՝ պատվով, և
թէ մեռանիցին՝ փառաք: Այս ամենայն Դշի աւուր
դրամիցն լինի:

1) անտերունչք.

(-) «Հեթանոսք որ զօրէնս ոչ ունին՝ բնութեամբ զօրինացն գործեն»: